

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՊԵՏ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՂ

### Տիգրան ՄՈՒԿՈՒՉՅԱՆ

*«Հ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ»*

20-րդ դարի երկրորդ կեսին շատ երկրների արդարադատության նախարարությունները կորցրին իրենց երբեմնի դերը արդարադատության կառավարման ոլորտում: Բացահայտորեն ձևավորվում էին միտումներ այս գործառույթը դատական ինքնակառավարման հատուկ մարմիններին հանձնելու ուղղությամբ, որոնք սկսեցին ամրագրվել նորագույն շատ սահմանադրություններում<sup>1</sup>: Ինչպես նշում է Մ. Կլեանդրովը. «Բարձրագույն դատական խորհուրդների ինքնավարությունը ավելի բարձր է «երկրորդ սերնդի» սահմանադրություններում: Արդարադատության նախարարությունների նշանակալից դերով և արդարադատության կառավարման ոլորտում ինքնավարության թույլ հիմքերով պետությունների սահմանադրություններում, որպես կանոն, լուծյալ շրջանցվում է արդարադատության կառավարման հարցը»<sup>2</sup>: Այդ մարմինները ունեն տարբեր անվանումներ. Ֆրանսիայում, Ռումինիայում, Պորտուգալիայում, Ալժիրում, Իտալիայում, Մոլդովայում՝ Մագիստրատուրայի բարձրագույն խորհուրդ, Իսպանիայում՝ Դատական իշխանության գլխավոր խորհուրդ, Բուլղարիայում և Ղազախստանում՝ Բարձրագույն դատական խորհուրդ, Լեհաստանում՝ Համալեհական դատական խորհուրդ (Krajowa Rada Sadownictwa), Հունգարիայում և Ուկրանիայում՝ Արդարադատության բարձրագույն խորհուրդ: Նշված մարմինների իրավասությունների ուսումնասիրմամբ կարելի է փաստել, որ նրանց ընդհանրական նպատակը «դատավորական հանրույթի շահերի ներկայացումն ու պաշտպանությունն է կադրային հարցերի լուծման կամ դրանց մասնակցության առումով»<sup>3</sup>: Եվ թերևս դա է պատճառը, որ գործնականում բոլոր խորհուրդների իրավասությունների տիրույթում է դատավորների նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, նրանց գործունեությունը դադարեցնելու, դատավորների տեղափոխման և արդարադատության իրականացմանն առընչվող մի շարք այլ հարցեր<sup>4</sup>: Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների առաջին փուլում ժողովրդավարական երկրների փորձի ընդօրինակման հիման վրա նշված հարցերը լուծելու համար, ինչպես նշում է Ռ. Պետրոսյանը, «Հայաստանում ստեղծվեց արդարադատության համակարգի մի նոր ինստիտուտ՝ դա-

<sup>1</sup> Տե՛ս Կуделич Е.А. Органы судейского сообщества как механизм обеспечения независимости судебной власти, мировой опыт/Закон. 2010, N2, էջ 35-46:

<sup>2</sup> Клеандров М.И. Становление и развитие российских органов судейского сообщества. Вестник Тюменского гос. университета. 2012, N3, էջ 8-9:

<sup>3</sup> Бурдина Е.В. Судейское сообщество в Российской Федерации: становление и основные направления совершенствования. Саранск: Изд. Мордовского ун-та. 2005, էջ 202:

<sup>4</sup> Մանրանյան տե՛ս Սудебные системы западных государств. Под. ред. Тумановой В.А. М. 1991, էջ 27-29, 161-162., Конституционное (государственное) право зарубежных стран. (Под. ред. Страшуна Б.А.) М. 1996, էջ 16-17, 295-345, 577, 622, 624:

տավորական հանրության բարձրագույն մարմին՝ ՀՀ արդարադատության խորհուրդը, և ամրագրվեցին նրա լիազորությունները»<sup>5</sup>:

Նոր կառույցի հիմնադրումը, ցավոք, ընթացավ նաև ինստիտուցիոնալ բնույթի թերություններով, և թերևս դա էր նաև պատճառը, որ 2005 թ. սահմանադրական բարեփոխումները անրադարձան նաև արդարադատության խորհրդին վերաբերող հիմնախնդիրներին: Նախ էականորեն փոփոխվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94-րդ հոդվածը: Դատարանների անկախության երաշխավոր հռչակվեցին Սահմանադրությունն ու օրենքը (նախկինում Հանրապետության Նախագահն էր, որը նաև գլխավորում էր արդարադատության խորհուրդը): Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 94.1 հոդվածով, որով սահմանվեց, որ արդարադատության խորհուրդը ձևավորվում ու գործում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով: Արդարադատության խորհրդի կազմը արմատականորեն փոփոխվեց, և սահմանվեց, որ կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Սահմանադրության 95-րդ հոդվածով սպառիչ սահմանվեցին արդարադատության խորհրդի լիազորությունները: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 3-րդ բաժինը (հոդվ. 97-171) ամբողջությամբ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմավորմանն ու գործունեությանը: Մանրակրկիտ կանոնակարգման են ենթարկվել խորհրդի բոլոր գործառույթների իրականացման մեխանիզմները, որը, անշուշտ, իրականացված դատաիրավական բարեփոխումների մեծագույն նվաճում է:

Սակայն նախընթաց տարիների պրակտիկան վկայում է, որ այդուհանդերձ առկա են որոշ հիմնախնդիրներ<sup>6</sup>, որոնցով պայմանավորված, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն օրենսդրական, այլև սահմանադրական փոփոխություններ:

Մինչև գործող իրավադրույթների վերաբերյալ դատողություններ ներկայացնելը անրաժեշտ է հիշել արդարադատության խորհուրդների հիմնական նպատակն ու գործառույթը, որը, համաձայն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec (2010) 12 հանձնարարականի, ինչպես նաև Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի թիվ 10 կարծիքի, դատարանների և առանձին դատավորների անկախության երաշխավորն է, և այդ կերպ խրախուսում է դատական համակարգի արդյունավետ գործունեությունը<sup>7</sup>: Այդ առումով էական է, որ խորհուրդը հիմնադրվի որպես որոշում կայացնող, այլ ոչ թե այլ մարմինների համար եզրակացություններ տվող մարմին<sup>8</sup>:

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94-րդ և 95-րդ հոդվածներն էականորեն բարեփոխվեցին, Սահմանադրությունը լրացվեց նոր՝ 94.1-րդ հոդվածով, սակայն հարկ է նկատել, որ բարեփոխված Սահմանադրությունը այդուհան-

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Իրավունք, 2010, էջ 933:

<sup>6</sup> Տե՛ս օրինակ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ 2013 թ. արտահերթ զեկույցի 3-րդ բաժինը՝ «Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Արդարադատության խորհրդում»:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 13:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 14:

դերձ չի սահմանում արդարադատության խորհրդի բուն նպատակը: Ուշագրավ է, որ այդ հարցը որևէ կարգավորման չի ենթարկվել նաև Ղատական օրենսգրքում: Ավելին, նրա 70-րդ հոդվածը, սահմանելով դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, վկայակոչում է երկու մարմին՝ դատավորների ընդհանուր ժողովը և դատարանների նախագահների խորհուրդը: Նշվածից ակնհայտ է, որ արդարադատության խորհուրդը չի համարվում դատական ինքնակառավարման մաս: Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ անգամ չի վիճարկվում արդարադատության խորհուրդների ինքնակառավարման մարմին հանդիսանալու հանգամանքը<sup>9</sup>: Ուշագրավ է, որ ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի մեկնաբանություններում ի.գ.դ., պրոֆեսոր Ռ. Պետրոսյանը արդարադատության խորհուրդը բնորոշում է հենց որպես «դատավորական հանրության բարձրագույն մարմին»<sup>10</sup>:

Այս առումով կարծում ենք՝ անհրաժեշտ է սահմանադրական մակարդակով ամրագրել արդարադատության խորհրդի նպատակը՝ որպես դատական անկախության ապահովման և կենսագործման երաշխավոր: Նշված հստակեցումը կնպաստի արդարադատության խորհրդի նշանակության վերաիմաստավորմանը:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի օրենսդրությամբ արդարադատության խորհրդի նպատակ չի հռչակվում դատական անկախության ապահովումը, այդուհանդերձ նշված մարմնի գործառնությունների հաշվառմամբ հարկ է փաստել, որ դրա արդյունավետ և պատշաճ աշխատանքով են առաջին հերթին պայմանավորված դատական իշխանության անկախության ապահովումն ու երաշխավորումը: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի»: Այս դրույթը վերարտադրված է ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասում, սակայն ավելի համառոտ, քան սահմանադրական տեքստն է: Այստեղ բացակայում է «առանց քվեարկության իրավունքի» արտահայտությունը: Կարծում ենք՝ օրենսդիրը հաշվի է առնել Սահմանադրության 94.1-րդ հոդվածի երրորդ մասի բարձրագույն իրավաբանական ուժը և սահմանադրական նորմերի գործողության անմիջականությունը:

Նիստը վարել, ըստ դատական օրենսգրքի, նշանակում է բացել նիստը՝ հայտարարելով, թե ինչ հարց է ենթակա քննության, ինչպես նաև խորհրդի անդամների համաձայնությամբ սահմանել նիստի օրակարգում ընդգրկվող հարցերի քննության կարգը, ղեկավարել նիստի ընթացքը: Վճռաբեկ դատարանի նախագահը խորհրդակցական սենյակում համապատասխան ակտեր՝ եզրակացություններ կամ որոշումներ, ընդունելիս չի մասնակցում խորհրդի՝ նիստերի դահլիճում և խորհրդակցական սենյակում որոշումներ կայացնելու քվեարկություններին: Այս կանոնը, անշուշտ, նպատակ ունի կանխել վճռաբեկ դատարանի նախագահի ազդեցությունը խորհրդի դատավոր անդամներ-

<sup>9</sup> St' u Kudelich E.A. Органы судейского сообщества как механизм обеспечения независимости судебной власти, мировой опыт/Закон.2010 N2 էջ 35-46, Бурдина Е.В. Судейское сообщество в Российской Федерации: становление и основные направления совершенствования. Саранск: Изд. Мордовского ун-та. 2005, էջ 202, Судебные системы западных государств. Под. ред. Тумановой В.А. М. 1991, էջ 28., Под. ред. Страшуна Б.А. Конституционное (государственное) право зарубежных стран. М. 1996, էջ 17. Клеандров М.И. Статус судьи. Правовой и смежные компоненты. М. Изд. Норма, էջ 25-28.

<sup>10</sup> St' u Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010, էջ 933:

րի վրա, սակայն դա, կարծում ենք, անհրաժեշտ է, քանզի խորհրդի դատավոր անդամները (խորհրդում քվեարկողների մեծամասնությունն են) խորհրդում իրենց գործունեության ընթացքում չեն ազատվում դատավորի պարտականություններ կատարելուց: Դրան զուգահեռ՝ վճռաբեկ դատարանի նախագահը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարգապահական վարույթ է հարուցում պալատի դատավորի նկատմամբ, կարող է իրականացնել պալատի նախագահի և վճռաբեկ դատարանի դատավորի բոլոր լիազորությունները (ՀՀ դատ. օր. հոդվ. 61): Այս հանգամանքը միանշանակ խոչընդոտ է խորհրդի դատավոր անդամների օբյեկտիվ (անաչառ) գործունեությանը (նրանց քննած գործերը ևս բողոքարկվում են վճռաբեկ դատարանում, և եթե հաշվի առնենք հատկապես այն, որ ձևավորված պրակտիկայում անգամ օրենքի սխալ մեկնաբանությունն է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմք հանդիսանում): Վերոգրյալը հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է խորհրդի դատավոր անդամների գործունեության ընթացքում սահմանադրական իրավակարգավորմամբ կասեցնել նրանց դատավորական լիազորությունները:

Մյուս կողմից՝ վճռաբեկ դատարանի նախագահին դատական օրենսգրքով վերապահվել են նաև կազմակերպական լիազորություններ, իսկ արդարադատության խորհրդի աշխատակազմի լիազորությունները դրվել են դատական դեպարտամենտի վրա (ՀՀ դատ. օր., հոդվ. 112), ինչը արդարադատության խորհուրդը ուղղակի կախվածություն է առաջացնում վճռաբեկ դատարանի նախագահից և աղավաղում սահմանադրական նորմի իմաստն ու բովանդակությունը՝ անգամ վտանգելով դատավորի կարգավիճակի սահմանադրական հիմքերը:

Եթե Սահմանադրությամբ նախատեսված է, որ արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 107-րդ հոդվածը սահմանել է նաև, որ արդարադատության խորհրդի նիստերը իրավիչում է վճռաբեկ դատարանի նախագահը: Բացի դրանից, նույն հոդվածով սահմանված է, որ վճռաբեկ դատարանի նախագահն արդարադատության խորհրդի նիստ զումարում է երկշաբաթյա ժամկետում՝ սկսած այն պահից, երբ ծագել է խորհրդի որոշում պահանջող հարց: Օրենսգիրքն ընդհուպ դրույթ է բովանդակում, որ, օրինակ, վճռաբեկ դատարանի նախագահը հանդես է գալիս արդարադատության խորհրդի անունից (հոդվ. 122): Ընդհանրապես, ՀՀ դատական օրենսգրքի 102, 107, 120, 122, 123, 125-րդ և մի շարք այլ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանի նախագահը դե ֆակտո դառնում է արդարադատության խորհրդի նախագահ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Այս առումով, կարծում ենք, ուղղակի անհրաժեշտ է ուժը կորցրած ձանաչել ՀՀ սահմանադրության 94.1-րդ հոդվածի 3-րդ մասը, փոխարենը ամրագրել իրավակարգավորումներ՝ բացառելով վճռաբեկ դատարանի նախագահի որևէ (անգամ կազմակերպական բնույթի, նիստերի մասին պարտադիր իրազեկված լինելու, նիստերի որոշումները նրան պարտադիր առաքելու և այլն) գործառույթ կամ լիազորություն՝ կապված արդարադատության խորհրդի հետ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածը սահմանում է արդարադատության խորհրդի լիազորությունները, որոնցից կցանկանայինք առանձնացնել և դիտարկել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը, քանզի վերջինիս իրականացումից ուղղակիորեն պայմանավորվում է դատական իշխանության անկախության կայացումը: Դատավորին կարգապա-

հական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, կարգը կանոնակարգված են ՀՀ դատական օրենսգրքում: Նշված օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն. «Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

1) արդարադատության նախարարը.

2) Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը:

2. Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

1) վճռաբեկ դատարանի նախագահը.

2) Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը՝ Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ»:

Նշված իրավակարգավորումը տարբեր ատյանի դատավորների միջև դրել է տարբերակում, որը, կարծում ենք, որևէ հիմնավորում չի կարող ունենալ, քանի որ անկախ այն հանգամանքից, թե որ ատյանի դատարանում է դատավորն իրականացնում գործառնությունը, ՀՀ Սահմանադրությամբ բոլոր դատավորների համար սահմանված երաշխիքները նույնական են: Միաժամանակ հարկ է նկատել, որ սահմանադրական բարեփոխումների և ի կատարումն դրանց պահանջների ընդունված օրենսդրական ակտերով (հատկապես ՀՀ դատական օրենսգրքը) արդարադատության նախարարի՝ որպես գործադիր իշխանության ներկայացուցչի՝ նախկինում ունեցած դատական համակարգի նկատմամբ վերահսկողության և ներազդման լիազորությունները վերացվեցին: Այդ առումով անհասկանալի է նախարարի՝ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքի պահպանումը: Ավելին, արդարադատության նախարարը ո՛չ արդարադատության և ո՛չ էլ դատավորների ընթացիկ գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող չի համարվում: Նշվածն առավել անընկալելի է դառնում Դատական օրենսգրքի 156 հոդվածի 2-րդ մասի կանոնակարգման համատեքստում, ըստ որի՝ կարգապահական վարույթ հարուցող անձը (տվյալ պարագայում՝ արդարադատության նախարարը) իրավունք է ստանում դատարանից պահանջելու և ուսումնասիրելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով քրեական, քաղաքացիական կամ ցանկացած այլ գործի նյութ, դատարանում ծանոթանալ դատաքննության ընթացքում գտնվող ցանկած գործի ցանկացած նյութերի, դատավորից պահանջելու գրավոր բացատրություններ և այլն: Նշվածն անշուշտ լայն դուռ է դատաքննության ընթացքում գտնվող գործերով դատավորի նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության: Ի դեպ, ուշագրավ է նաև, որ դատական օրենսգրքը, ի խախտումն դատավարության մասնակիցների օրինական շահերի, դռնփակ դատական նիստերի նյութերին ծանոթանալու որևէ կարգ չի նախատեսում:

Նշված իրավագործության պահպանումը, կարծում ենք, նախկին արատավոր մոտեցումների իներցիան է, բայց շատ վտանգավոր հետևանքներով, քանի որ պոտենցիալ հնարավորություն է գործադիր իշխանության ներկայացուցչին՝ միջամտելու դատարանների գործունեությանը: Եթե հաշվի առնենք նաև վճռաբեկ դատարանի լիազորությունները, նրա կայացրած դատական ակտերի ուժը և այդ նույն դատարանի դատավորների մասով նախարարի լիազորության բացակայությունը, ապա ընդհանրապես անհասկանալի են դառնում թե՛ իրավագործության պահպանումը, թե՛ ատյանային տարբերակումը: Նշվածը հաշվի առնելով՝ կարծում ենք անհրաժեշտ է օրենսդրորեն բացառել արդարադատության նախարարի՝ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը: Միաժամանակ, օրենսդրական փոփոխությունների միջոցով, կարծում ենք, անհրա-

Ժեշտ է բացառել անգամ կարգապահական հանձնաժողովին որևէ կերպ միջամտելու դատավորի գործունեությանը վարույթում գտնվող գործերով: Այլ կերպ ասած՝ արգելել դատավորի վարույթում գտնվող գործերով որևէ նյութ պահանջելը կամ դատավորից որևէ բացատրություն պահանջելը<sup>11</sup>:

Ղատական օրենսգրքով սահմանվում են նաև դատավորին կարգապահական վարույթ հարուցելու առիթները (հոդված 155), որոնցից են վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս, գործը կամ հարցը ըստ էության լուծելիս կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կարգավիճակն ամրագրված է Սահմանադրությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ դատարանը, բացի սահմանադրական արդարադատության վերաբերյալ հարցերից, մնացած բոլոր դեպքերով «բարձրագույն դատական ատյանն» է: Ուշագրավ է, որ, ըստ սահմանադրական նորմի, վճռաբեկ դատարանը չի հռչակվում որպես «բարձրագույն դատարան»: Սա միանշանակ կշռադատված և սահմանադրափրավական մյուս նորմերի պահանջների հաշվառմամբ տրված համակարգային լուծում է: Վճռաբեկ դատարանը, համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի. «բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտը»: Նշված ատյանին Սահմանադրությունը չի վերապահել իրավագործություն որակական գնահատականներ տալ, այլ ատյանի դատական ակտին կամ, ավելի ճիշտ, ակտը կայացրած դատավորի գործողություններին, ավելին՝ դրանք որակելով ակնհայտ ապօրինի: Հակառակ պարագայում ստացվում է, որ ցանկացած բողոք քննելիս, ավելին՝ բողոքի ընդունելության հարցը լուծելիս վճռաբեկ դատարանը գնահատման ինքնուրույն առարկա պետք է դարձնի դատական ակտում սխալների առկայությունը և նրանց որակական բնույթը: Ղա, իհարկե, այդպես չէ: Ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կոնկրետ բողոքի քննությամբ կայացված որոշմամբ ոչ միայն լուծում է տրվում բողոքին, այլ ընթացք փաստվում է, որ տվյալ դատարանի ակտը անկհայտ ապօրինի է: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերը, որոնցից է արդարադատություն իրականացնելիս դատավարական կամ նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Մյուս կողմից էլ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորին պատասխանատվության ենթարկող միակ մարմինը արդարադատության խորհուրդն է:

Նշված իրավանորմերի պահանջներից ակնհայտորեն բխում է, որ Արդարադատության խորհուրդն է այն միակ մարմինը, որը պետք է որոշի՝

1) թու՞յլ է տրվել արդյոք նյութական կամ դատավարական օրենքի նորմի խախտում:

2) այդ խախտումը նորմի ակնհայտ և կոպիտ խախտում է, թե՞ ոչ:

Այսինքն՝ ստացվում է, որ միակ սահմանադրական մարմինը, որը պետք է գնահատական տա խախտմանը և որակի այն, դա Արդարադատության խորհուրդն է: Սակայն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի գործադրմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը բազմաթիվ որոշումներ կայացնելիս

<sup>11</sup> St' u նաև Восточного партнерства—Содействие правовой реформе в странах Восточного партнерства..., էջ 109-110:

իր որոշմամբ, այսինքն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով ուղղակի գրում է. «Դատարանը թույլ է տվել օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում»:

Նման դատական ակտի կայացմամբ վճռաբեկ դատարանը իրացնում է արդարադատության խորհրդի գործառնությունը: Եվ եթե ուսումնասիրենք կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ապա դրանցում ուղղակի հղումներ կան հենց վճռաբեկ դատարանի որոշումներում տրված որակումներին<sup>12</sup>: Վճռաբեկ դատարանի այդ դատական ակտերն ունենում են կանխորոշիչ նշանակություն խորհրդի համար, այնինչ դրանք ընդհանրապես պետք է նման նշանակություն չունենային: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարական օրենսգրքը հստակ սահմանում է, թե ինչ պետք է նշվի վճռաբեկ դատարանի որոշման մեջ, հստակ սահմանվում են արդարադատություն իրականացնելիս վճռաբեկ դատարանի լիազորությունները: Դրանցից ոչ մեկում չկա սահմանված իրավազորություն, որ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ պետք է գնահատական տա նաև դատական ակտ կայացրած դատարանին: Ի դեպ, դատավորի արարքը ակնհայտ կոպիտ խախտում որակելու «սպառնալիքը» չեզոքացնում է նաև հատուկ կարծիքի ինստիտուտը: Քանզի երբևէ հնարավոր չէ կանխորոշել, թե օրենքին տրված նոր մեկնաբանումը կորակվի՞ արդյոք կոպիտ խախտում, թե՞ ոչ:

Կարծում ենք, որ նշված մոտեցումը ոչ միայն հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակին, այլև լուրջ վտանգ է սպառնում անկախ դատական համակարգի կայացման տեսանկյունից, քանզի անհասկանալի է, թե ինչպես պետք է գործի արդարադատության խորհուրդը, երբ առկա է վճռաբեկ դատարանի դատական ակտ, որով ամրագրագրվել է օրենքի կոպիտ խախտում: Նման պայմաններում անելանելի (թե՛ իրավական և թե՛ բարոյահոգեբանական) վիճակում է հայտվում նաև արդարադատության խորհուրդը, քանզի անպատկերացնելի են թե՛ դեպքը և թե՛ հետևանքները, երբ, ասենք, վճռաբեկ դատարանի դատական ակտով փաստվում է օրենքի կոպիտ խախտում, սակայն խորհուրդը այն այդպիսին չի համարում: Ի՞նչ է ստացվում. արհամարվում, նսեմացվում է դատական ակտը, իսկ այն կայացրած վճռաբեկ դատարանը պե՞տք է պատասխանատվություն կրի, թե՞ ոչ: Այս առումով կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի վերոհիշյալ դրույթը անհրաժեշտ է վերացնել, քանի որ պրակտիկ կիրառության ընթացքում վերադաս կամ ստորադաս դատարաններ եզրույթները կիրառվում են ամենաբացարձակ իմաստներով. վտանգվում է անկախ դատական իշխանության կայացումը, ուստիև առաջարկվում է ընդհանրապես, երբ խոսքը վերաբերում է դատարաններին, հրաժարվել նշված եզրույթներից: Հենց այս եզրույթների սխալ ընկալման հետևանք է նաև վճռաբեկ դատարանի այն իրավազորության առկայությունը, երբ վճռաբեկ դատարանը ընկալվում է ոչ թե որպես դատական ատյան, այլ համակարգի գլուխ, վերադաս, բարձրագույն մարմին:

ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, արդարադատության խորհրդի 24.11.2010 թ. թիվ ԱԽ-21-Ո-23, 26.03.2010 թ. ԱԽ-5-Ո-03 որոշումները:

և չեն հակասում դատական օրենսգրքի նորմերին: Միանշանակ արձանագրելով կարգապահական վարույթի կատարելագործմանն ուղղված դատական օրենսգրքի կանոնակարգումները՝ հարկ է փաստել, որ վարույթի ամբողջ ընթացակարգը առավել ճիշտ է սահմանել հենց դատական օրենսգրքով, որպեսզի հստականա «իրենց էությամբ կիրառելի» եզրույթը: Ավելին, անհրաժեշտ է ուղղակի նախատեսել կանոն առ այն, որ արդարադատության խորհրդի բոլոր որոշումները ոչ միայն պետք է լինեն պատճառաբանված, այլև դրանցով պետք է պատճառաբանվեն դատավորի՝ վարույթին ներկայացած հանգամանքերից յուրաքանչյուրը: Այս խնդրին որոշ առումով անրադարձ է կատարված նաև ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012 թ. ՍԴՈ-1063 որոշմամբ<sup>13</sup>: Միանշանակ և ավերապահ ընդունելով որոշումների և պատասխանների պատճառաբանվածության վերաբերյալ հիմնավորումները՝ ցանկանում ենք փաստել, որ, ցավոք, ոչ միշտ են պատճառաբանվում անգամ արդարադատության խորհրդի որոշումները: ՀՀ արդարադատության խորհրդի 11.06.2011 թ. «ՀՀ վարչական դատարանի դատավոր Արծրուն Միրզոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ» ԱԽ-10-Ո-10, 26.03.2010 թ. «ՀՀ վարչական դատարանի դատավոր Քրիստինե Սկոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ» թիվ ԱԽ-5-Ո-03 և մի շարք այլ որոշումներ չնայած ունեն պատճառաբանական հատվածներ, սակայն դրանցով անդրադարձ չի կատարվել բազմաթիվ էական նշանակության հանգամանքների, որոնք բերված են դատավորների բացատրություններում: Նմանատիպ երևույթները բացառելու համար գտնում ենք, որ դատական օրենսգրքը ոչ թե պետք է հղում պարունակի վարչական դատավարության օրենսգրքին, այլ հենց դատական օրենսգրքով պետք է մանրամասն կանոնակարգվի կարգապահական ամբողջ վարույթի ընթացակարգը:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններն էապես կբարձրացնեն արդարադատության խորհրդի դերն ու նշանակությունը՝ նպաստելով նաև անկախ դատական իշխանության լիակատակար կայացմանը:

## СОВЕТ ЮСТИЦИИ КАК МЕХАНИЗМ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПОВ СУДЕБНОЙ ВЛАСТИ

**Тигран МУКУЧЯН**

*Председатель Центральной избирательной комиссии РА*

На первом этапе проведения судебной реформы в РА на основе прогрессивного опыта демократических стран был создан новый институт системы правосудия: высший орган судейского сообщества – Совет юстиции РА, и были закреплены его полномочия.

Создание новой системы, к сожалению, имело также недостаток институционального характера и, возможно, это стало причиной того, что конституционные ре-

<sup>13</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2013/1 (941), 08.01.2013



формы 2005-го года были обращены также к вопросам, касающимся Совета юстиции. В результате конституционных реформ был существенно изменен порядок формирования Совета юстиции, были переосмыслены его роль и значение. Судебный кодекс Республики Армения детально регулирует институт Совета юстиции.

В данном исследовании рассматривается процесс, его результаты. Все это, в первую очередь, рассматривается с точки зрения вопроса создания независимой судебной системы.

## THE COUNCIL OF JUSTICE AS AN IMPLEMENTER OF JUDICIAL PRINCIPLES

**Tigran MUKUCHYAN**

*Chairman of the RA Central Electoral Commission*

---

In the Republic of Armenia, in the first phase of judicial reforms, based on the advanced experience of democratic countries a new institute of justice system - the highest judicial body in public - the RA the Council of Justice was established and its powers were fixed.

Establishment of the new structure, unfortunately, proceeded also with institutional shortcomings and perhaps it was also the reason that constitutional reforms in 2005 touched upon the problems related to the Council of Justice. As a result of constitutional reforms, the formation procedure of justice board changed essentially, its role and meaning were re-interpreted. The Council of Justice institution was regulated in details by the Judicial Code of the Republic of Armenia.

Implemented reforms, achievements due to it, as well as shortcomings and failures in it (in author's opinion) are presented in the accomplished study on which solutions and their reasonings are presented. Everything is considered, first of all, from the perspective of independent judicial authority formation issue.

**Բանալի բառեր** – Սահմանադրություն, արդարադատության խորհուրդ, դատարան, դատավոր, դատական ակտ, անկախ դատական իշխանության, դատաիրավական բարեփոխումներ, դատական համակարգ, վճռաբեկ դատարան, կարգապահական պատասխանատվություն

**Ключевые слова:** Конституция, Совет юстиции, суд, судья, судебный акт, независимая судебная власть, судебные реформы, судебная система, кассационный суд, дисциплинарная ответственность

**Key words:** Constitution, justice board, court, judge, judicial act, independent judicial authority, judicial reforms, judicial system, court of appeal, disciplinary responsibility